



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines


Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:


- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>



300



Հ. Տ. Սիրունի

1908

ՄԹՆՇԱՂ

Հասորիս գեղարուեստական կողմը արուեստաւեր
նկարիչ Տիար Ռաւաչիչ Եիշմանեանի խնամքով
պատրաստուած է:

Siruni, Hakob Chobolian
Mt. ishagh kertuatsno, 1906-1907

Յ. Ջ. ՍԻՐՈՒՆԻ

688

Մ Թ Ն Շ Ա Ղ

ԻՏԻՐՈՒԱԾՆԵՐ

1906-1907

67 p.

Տպագր. Ջ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ
1908

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Grad

EREN

995

EVHR

Գանի մը օրէն պիտի հրատարակուին

ԲԱՆՏԻԱ ԵՐԿՈՒՆՔԷՆ (Քերթուածներ)

ԵՐԱԶՈՒԱԾ ՕՐԵՐ (Քերթուածներ)

GRAD
REN

795
X 11 99



ՀԱՒԱՏՔԻ ՊԱՆԵՐ...

«Սիրտիս խորերէն՝ Աստուածիս հետ խօսք»

Գոնէ քո՛ւ սէրըդ, եկո՛ւր ո՛վ Աստուած, հոգիիս մէջ դի՛ր,
Սէրերու ցաւէն արդէն խոցոտած վշտակոծ հոգիս՝
Թափո՛ւր կը մնայ, սէրերը շատո՛նց թըռած են հոնկէ,
Գոնէ քո՛ւ սէրըդ, եկո՛ւր ո՛վ Աստուած, հոգիիս մէջ դի՛ր:

Պաշտո՛ւմըդ, Աստուա՛ծ, էութեանս մէջ եկո՛ւր զե-
տեղել,
Սիրտս պարտասած սէր արձաններու երկար պաշ-
տումէն՝
Իր տարփանքներուն ցնդելէն կարծես յուսախա՛ր եղաւ,
Պաշտո՛ւմըդ Աստուա՛ծ, էութեանս մէջ եկո՛ւր զե-
տեղել:

Գորովա՛նքդ վեհ փութա՛ ցանցընել տկար մարմինիս,
Ան երկար ատեն գիրդ բազուկներու համակ տենչացող՝
Ճրտութիւ՛ն մը լոկ զգաց այդ փազփուն սին բազուկ-
ներէն,
Գորովա՛նքդ վեհ փութա՛ ցանցընել տկար մարմինիս:

Սիրտըս հաւատքի՛դ ներարկումներուն գոռ բաղձանքն
ունի,
Երկար վայրկեաններ կոյր հեշտանքներու մի սյն հա-
ւատաց,
Ու պատրանքներու հսկայ ցնցումը առաւ սնոնցմէ,
Սիրտըս հաւատքի՛դ ներարկումներուն գոռ բաղձանքն
ունի:

Հըրուտ նայուածքիդ մեղմիկ պոնդերո՛ւն միայն կը
սպասեմ,
Կեղծ շառայններու թոյլ գգուանքին տակ օրօրուեցայ
լոկ,
Բայց անոնք միայն տկար աչքերուս շլացո՛ւմ բերին,
Հըրուտ նայուածքիդ մեղմիկ պոնդերո՛ւն միայն կը
սպասեմ:

Հօ՛ր մը գուրգուրոտ ու անուշ ձայնով եկո՛ւր պատէ
զիս,
Դեռ միայն սիրոտ պիւրկ շրթունքներու մրմունջներն
առի,
Որոնք մեղկ հոգիս թմրեցուցած են իրենց գոլին մէջ,
Հօ՛ր մը գուրգուրոտ ու անուշ ձայնով եկո՛ւր պատէ
զիս:

Խանդաղա՛տ դէմքով, հասի՛ր ո՛վ Աստուած, այստ
զովացո՛ւր:
Սեւ համբոյրներու դիւթանքին միայն յուշքն ունի
հոգիս,
Որոնք սայթաքուն քայլերս աւելի՛ անդունդը տարին,
Խանդաղա՛տ դէմքով, հասի՛ր ո՛վ Աստուած, այստ
զովացո՛ւր:

Քունկիդ գալարուող պարոյրո՛վը զիս պարփակէ Աստ-
ուա՛ծ,
Հոգիս յղփացա՛ւ օտար բոյրերու սին կախարդանքէն,
Ու քու բուրմունքիդ անէացումին բաղձանքը ունի,
Քունկիդ գալարուող պարոյրո՛վը զիս պարփակէ Աստ-
ուա՛ծ . . . :



Ս Է Ր Ե Ր Ս

**Մանուկ սէրեր դեռ իմ սիրտս չպատած՝
Բիբոս կատտանքնե՛ր հոգիիս մէջ դողացին .
Մանկութեան մը գոռ թախիծներն հըրածին ,
Սէրէն առաջ վի՛շտը տուին մթամած :**

**Ցաւով պատած լուռ կսկիծներ մանկական՝
Վճիտ հոգիս տազնապներու մէջ գըրին .
Կեանքիս առջի կոյս բաղձանքներն ալ լըռին ,
Դեռ չծլած հոգիիս մէջ մարեցան :**

**Սէրին խանդը սիրտէս հեռու կը մընար ,
Ձիս շուրջպատող սիրտ գիրկեր չզգացի ,
Կարօտի ջերմ հուրքը պահուած էր ինծի ,
Ու ցաւերը՝ սէրե՛ր եղան ինձ համար . . .**

**Ա՛լ պզտիկուց կեանքին հանդէպ անտարբեր՝
Սիրտս մնաց սէրին առջև միշտ թափուր ,
Ու բընութեան սէրերը կոյս ու մաքուր ,
Այդ պարապը եկան մտնել անվեհեր :**

**Ցաւերն իրեն ընկեր ունէր իմ հոգիս՝
Իր սէրերը այդ ցաւին շուրջ կը դառնար ,
Երբ բընութեան սէրն հոն մտաւ խանդավառ ,
Վայրի սէրով , մեղկ հաւատքով լեցուց զիս :**

**Ու պատանի ջերմ բաղձանքներ տարփագին՝
Հետզհետէ հոգիիս մէջ ծաղկեցան .**

Այդ իղձերը սիրտիս խորը ցիրուցան՝
Նոր վայելքներ ու նոր սէրեր սփռեցին :

Թոյլ աչքերու , ժպիտներու բաղձանքով՝
Բոլորովին նոր սէրեր զիս պատեցին ,
Ու բընութեան սէրերուն տեղ հեշտագին ,
Տարփոտ սէրեր հոգիս առին անվրդով :

Անյուսութեան վայրկեաններուս միջոցին՝
Այդ ոին սէրը գոռ պատրանքներ առաւ լուս .
Հետզհետէ կոտտանքին տակ վշտալուր ,
Այդ սէրերը տարփոտ հոգիս թողուցին :

Ու յուսահատ՝ այդ յաջորդող սէրերուն
Վըրաս թողած պատրանքներէն վշտօրօր ,
Նոր սէրի մը բաղձանքն ունին ա՛լ բոլոր՝
Սիրտիս տինդոտ խորքերն համակ թրթրուուն . . . :

Նոր սէրի մը կը բաղձամ ա՛լ , նոր սէրի՛ ,
Ըլլայ՝ գորով , ըլլայ՝ վայելք , ըլլայ՝ յոյս ,
Սէ՛ր մը ըլլայ թող վերջապէս իղձերուս ,
Ըլլայ՝ հեշտանք , ըլլայ սէրե՛ր ալ վայրի . . . :

Վնաս չունի՛ , տարփանք ըլլայ նորածին ,
Միայն թէ իմ սիրտս պարտպ չձգուի՛ ,
Միայն թէ ան անյուսօրէն չլքուի՛ ,
Ինչ սէր ըլլայ թող սիրտիս մէջ արծարծին :

Ըլլայ պաշտո՛ւմ , ըլլայ գորո՛վ պաշտումի ,
Վեհ պարոյր մը մէջըս ցայտող խունկերուն ,
Հաւա՛տք ըլլայ , բիրտ հաւա՛տք մը երազուն ,
Միայն թէ իմ սիրտըս անյոյս չթողմի :





ՀԻՇՏ ՍԻՐՏԻՍ ՆՄԱՆ ...

Բուրվառին տրուած մեղմիկ խունկերուն
Պարոյրը վտիտ կը բարձրանայ վեր .
Խոյանքով լեցուն առած նուրբ թևեր՝
Պարուրել կ'երթայ կոյսը երազուն :

Անոր այտերը կ'երթայ կը պատէ ,
Մեղմիկ ժպիտներ խլելու համար ,
Խունկերն արտադրող հուրքէն տննդավառ՝
Լոկ մոխիր ունի բուրվառն արծաթէ :

Արծաթ սիրտըս է բուրվառն այդ խորին ,
Պաշտումի համար նուիրուած անօթ .
Հրայրքներու մէջ վառքով մը աղօտ
Հոն պտղունց մը սէր կը մխայ լըռին :

Տարփանքներս անհուն կրակն են անոր ,
Սէրերն արծարծող՝ բուրվառին խորէն .
Ու երբ սէրերը սպառին նորէն՝
Պատրանքի փշո՛ւր կը մընայ բոլոր . . . :





ԼՌԻՆ ՀԻՒԾՈՒՄ, ԱՒՆ, ԼՌԻՆ...

Կամաց կամաց
 Բաղձանքները թափթփեցան հողիէս,
 Տարփանքներն ալ տուին խոյս՝
 Յոգնած հողիիս թոյլ ուրտներէն... :
 Երազներուս ցուրտին հետ մընացած եմ մխայթակ՝
 Առանց սէրի ու յոյսի,
 Սիրտիս հուրքերը բոլոր՝
 Որոնք առաջ էութեանս վճիտ ցուքեր կուտային,
 Շատոնց հեռու փախած են՝
 Կոտտանքներուս չկրնալով դիմադրել :
 Տինդոտ խանդերն ալ անոր՝
 Սարսուռներու հսկայ ցայտքեր են առեր... :
 Լըռին հիւժուժիս դուն բոլորովին անզգայ դարձար,
 Անտարբե՛ր եղար բոլոր ցաւերուս,
 Վայրկենական կախարդում մը ցանկացիր՝
 Ու անկէ անդին գոռ երկունքներուս խորքը չի տեսա՛ր :
 Հող չունեցա՛ր թէ՛ ինչպէ՛ս կը հիւժիմ քեզ համար
 ասդին ,
 Հաճոյքներէդ զատ
 Ամէն բաներուս անտարբեր դարձար :
 Վայրկենական վայելքներդ փնտուհցիր սիրտիս մէջ ,
 Ու անգամ մը չե՛ս նայած
 Թէ ի՛նչ բոցոտ լուռ հըրայրքներ թե առած են հոն
 սեղմիկ :
 Սէ՛րըս զգալ ուզեցիր՝

Սակայն ինչո՞ւ չքաղծացիր այն հիւծումներն ալ գէտել՝
Որ այդ սէրը կ'արտագրեն ,
Եւ զոր սիրտիս մէջ աչքերէդ թաքճո՞ւն պահել ջանացի .
Ջինջ բուրվառներու խորքէն մխացող
Խունկերուն նման ,
Որոնք գալարուն հեշտ պարոյրներով՝
Պաշարել կ'երթան դէմքը պատկերին .
Սակայն այդ դէմքը անգիտակ է միշտ թէ խունկը
ինչպէ՛ս ,

Լըռիկ մխալով

Իր քով է խուժած , ցայտած դէմքն ի վեր ,
Թէ ինչպէ՛ս անթիւ լուռ կոտտանքներ ալ անցած են
բոլոր

Այդ խունկն արտագրող վճիտ բուրվառէն ,
Որ պիրկ հըրայրքներ , տենդագին հուրքեր ընդունած
է լուռ ,

Այդ բուրմունքները ցայտելու համար՝
Պատկերին ժպտուն ու զուարթ կոյսին ,
Որ բոլորովին այդ լուռ հիւծանքին արդէն անգիտակ ,
Այդ բոյրը երկնող հուրքոտ կոտտանքին անտարբեր
արդէն ,

Լոկ սին ժպիտ մը կը ցոլացնէ

Իր դէմքին վըրայ :

Այդ արձանին պէս

Թոյլ ժպիտ մը լոկ ցոյց կուտաս դէմքիս այն սէրին
փոխան՝

Ձոր ամբողջ հուրքոտ սիրտ մը երկնած է ,

Որ տառապանքի ծնունդ է բոլոր .

Ու ջինջ սէր մըն ալ սիրտդ զգալով՝

Ձայն խմբիս խառնելու տեղ

Մէզ ժպիտով մը կը քարանաս լոկ .

Այն գոռ սէրը որ հագիէս ցայտելով
 Պսպղուն դէմքդ կը շողացնէ,
 Չե՞ս մտածիր երբեմն նմանցնել այն տկար
 Ջինջ պլպուլներուն,
 Զոր վատուժցած մոմիկ մը դուրս կը ցայտէ պատկերին
 Ժպտուն դէմքին լոյս տալու:
 Այդ սպառուղ մոմի՛կն է հոգիս,
 Որ ինքն իր մէջ կը հիւծի
 Պաշտումով մը իր սև զոհը ընելու,
 Ու դուն անտարբեր՝ այդ պատկերին պէս՝
 Մոմի՛ն հատնումը հրճուանքով տեսար,
 Իր պլպուլները բարձրացան տակաւ փայլ մը տալու
քեզ՝

Ու դուն պարծանքով դիտեցիր զանոնք:
 Ու երբ մոմը սպառի,
 Ու նշոյլերն անհետին,
 Թերևս այն ատեն՝, անզգա՛ծ հուրի,
 Ուզիս մտածել հագիլիս՝ վըրայ,
 Որ լուռ պաշտումով հալեցաւ մեղմիկ զոհ նայուած-
քիդ տակ,

Հսկայ սէր մը երկնելու,
 Ու այդ սէրը ցայտելու անզգայ դէմքիդ . . . :





Ջ ՈՒՐԻՆ ԱՂՋԻԿԸ

Գետին հսկայ անիւները կը դառնան,
Փրփուրներու ճերմակ ցայտքեր հանելով.
Գետն առտուան իր քունին մէջ անվրդով՝
Դեռ կը ծծէ կոյս հմայքները գարնան:

Հորիզոնի նուրբ ցուքերը առտուան՝
Իրենց շողը նոր տուեր են ջուրերուն.
Շաղով օծուն մարմանդներն ալ քիչ հեռուն,
Մեղկ շառայլներ նոր ընդունած կ'երևան:

Կտաւներու ծանր բեռը իր ուսին՝
Առտուն կանուխ գետափ հասած է արդէն.
Այտերը նուրբ թոյրեր առած են վարդէն,
Ու իղձերն ալ վայելքի մէջ կը մտնն:

Իր ոտքերը մինչև սրունքը բացած,
Վարսի փունջն ալ ցանցնելով ուսերուն,
Մեղմիկ ջուրին մէջ կը մտնէ երազուն՝
Առտուան զով հմայքներէն յղփացած:

Իր հագուստին անփոյթ ձգած ցանցերէն՝
Նուրբ իրանին ջինջ մարմարը կը ցայտէ.
Առտուան ալ նրբին ցուքերն արծաթէ,
Վճիտ կուրծքին հսկայ փայլեր կը բերեն:

Ձուլալ ջուրին պայծառութեանը մէջէն՝
Մերկ սրունքին կուռ հմայքը կը հոսի .
Յատակ թոյրերն ու տարփանքներն իր կոյսի ,
Ձուրի ցայտքեր մեղմիկ կուգան , կը թրջեն :

Ձուրերուն մէջ յուշիկ ծուած դէպի վար ,
Իր կտաւը կը ցայէ՛ ան գրգանքով .
Այդ պահերէն կարծես արբշիռ ու գինով ,
Ճակտին վրայ յո՛յդ մը անգամ չ'երևար :

Հեռու կարծես ուրիշ կրքոտ սէրերէ ,
Լոկ բնութեան սէրն ունի ան կուրծքին տակ .
Տարփանքներու թոյրերուն դեռ անգիտակ՝
Վայրի սէր մը լոկ իր կուրծքը կը գերէ :

Երազներ դեռ իր աչքերը չին պատեր ,
Դեռ հոգին ալ հուրքեր չունի օդայած ,
Սիրտին խորը բընութեան սէրն է պահած ,
Սէրը՝ ջուրին , փրփուրին մէջ է դիտեր :

Գետին չքնաղ աղջիկն է ան գեղանի ,
Ձով շաղերու , նուրբ փրփուրի նուիրուն ,
Միշտ յագեցած ծածանքովը ջուրերուն . . . :
Վայրի սէրով լեցսւն սիրտ մը վայրենի . . . :





ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ

Ձինջ վայելքներուդ հմայքներուն մէջ օծուեցաւ հողիս,
Պարուրեցին զիս մարմինէդ ծորած դիւթանքներն
աղու .

Առանց զիս պատող բիրտ տազնապները հետս զգալուն՝
Գգուանքներուդ տակ հեռուէն հեռո՛ւ զգլխած ես զիս :

Ներկայութիւնդ հեշտին վայելք մը եղաւ ինձ համար,
Քեզմէ կաթկթող թոյլ գրգանքները սիրտըս ընկճեցին .
Ու քու այդ վճիտ սև վայելքներդ համակ հըրածին՝
Յափրանքի մը հետ ցնդեցան մեղմիկ սիրտէս դէպի
վար :

Ու վայելքին տեղ երբոր յափրանքը յաջորդեց սիր-
տիս ,
Ա՛լ կամաց կամաց սիրտիս խորերէն յուշքերդ թը-
ռան ,
Սեցած սպիններ միայն մընացին հողիիս վըրան ,
Ու պժգանք մըն ալ եկաւ , հասաւ ինձ , պաշարեց
չորս դիս :

Քու վէս մարմինիդ ջինջ հըրապոյրին ու սէգ ձեւե-
րուն ,
Լոկ պժգանքով մը նայեցայ բոլոր , պժգանքո՛վ մը լոկ ,
Քանզի յափրացած , քանզի ձանձրացած հուրքէդ ա-
նողոք ,
Ջու՛ր սպասեցի՝ սիրտըս ու հողիս յուշքիդ սևեռուն :

Ու պժգանքին հետ վա՛խ մըն ալ սիրտէս սպրդեցաւ
ներս,
Քու թովանքներէդ լոկ արհաւիրքներ սկսայ առնել.
Սին հեշտանքներդ ա՛լ ինձի համար դափիր մը անել՝
Սոսկումի թափով պիտի ողջունուին զգացումներէս :

Կուռ հմայքներդ որոնք քիչ առաջ հուրքեր կու-
տային,
Թուլցած աչքերուս վախի մը ցայտքով պիտի երևան-
թաւիչ շրթունքդ, կարմիրը այտիդ, կուրծքըդ հո-
տևան՝

Չպիտի՛ զգամ խանդ ու եռանդով մը անրջային :

Այդ թոյլ ձեւերդ համակրութիւնըս ա՛լ չեն գրաւեր,
Ու երբոր սիրտէս համակրութիւնը հեռանայ յանկարծ՝
Սէրն ալ միասին, յուշքն ալ միասին կը փախչի ան-
դարձ,
Ու սիրտս ալ արդէն քեզ պիտի ձգէ միշտ անհրա-
ւէր.... :

Սէրը երբ թըռաւ, պաշտումն ալ մէկտեղ թըռած է
արդէն,
Պաշտումին հետ ալ մեր գուրգուրանքը քայքայուած
լըռին.
Ու առանց սէրին, առանց պաշտումին, առանց գո-
րովին
Վայելքը կ'երթայ, վայելքին ի՛ղձն ալ կը թըռի՛
սիրտէն.... :





Պ Ա Ր Զ Կ Ե Ա Ն Ք Ը

Ուզեցի որ սէրերուն մէջ սիրաբաւ անկեղծ մընար միշտ,
Հոգիս անկեղծ՝ իր հաւատքի պահերուն,
Ուզեցի որ մեղկ էութիւնս ալ բոլոր
Անկեղծ ըլլար յաւիտեան՝

Խինդին փարած ժամանակ, վիշտով ուռած ժամանակ:
Ամբողջ կեանքով անկեղծ ըլլալ ուզեցի,
Հոգիս անկեղծ, միտքս անկեղծ,
Անկեղծ բոլոր վտիտ խորքերն իմ սիրտիս,
Մի՛շտ անկեղծ . . . :

Սէրը սիրտիս աւքերուն մէջ իր կուռ հըմայքը դրաւ,
Անկեղծ խորքերը սիրտիս՝

Սէրէն ցայտած նուրբ բաղձանքներ պատեցին,
Նոր հեշտանքներ պարուրեցին խանդաղատ՝

Մանկութեան մը հուրքով ծընած, մանկութեան մը
խանդով սընած

Կոյս տարփանքները սիրտիս :

Կամաց կամաց կաթկթելով իր հմայքը պարզունակ՝

Սիրտս տենդոտ հըրայրքներու սէրն զգաց,
Իր մանկութեան արարչ սէրերէն թափթփած,

Աւելի նոր սէրե՛ր զգալ,

Աւելի՛ նոր,

Նոր սէրե՛ր,

Նոր տարփանքնե՛ր երազեց . . . :

Վճիտ ու վեհ հաւատքի մը ցանցերուն մէջ ընկղմած ,
Աշխարհի սե խորհուրդներուն
Ցուրտ հուրքերը բընաւ չունէ՞ր աստուին
Խեղճ հոգիս :

Կեանքը , խորէն ապրուած այս կեանքս նուրբ ,
Այդ հաւատքին հեշտանքին տեղ՝

Մթին խոհեր ցանցընեց

Մեղկ հոգիիս ցանցերուն :

Այդ հաւատքին , այդ ներշնչող հաւատքին ,
Փթթումները թափթփեցան հոգիէս ,
Բւ հոն մինակ ,

Վիշտով օծուած ու անտարբեր կոյր տարփանքներ
մընացին .

Մանկութեան մը պարզ հաւատքը , մանկութեան մը
խանդը պարզ ,

Արդէն հոգիս թողուցին ,

Վճիտ ցուքը տեղի տուաւ մթութեան հետ խառնուած
Հաւատքէ դուրս խոհերու . . . :

Կամաց կամաց

Միտքս ալ իր պարզ խորհուրդները մերկացաւ ,
Բընութեան մը պարզ սէրին տեղ՝

Կեանքի՝ սէրը մտաւ հոն ,

Կեանքը սրբող խորհուրդներուն փոխանակ

Ցնցող խոհեր մնացին . . . :

Ուզած էի որ սէրերուն մէջ սիրտըս անկեղծ մընար
միշտ ,

Հոգիս անկեղծ իր հաւատքի պահպանուն ,

Ուզած էի որ էութիւնս ալ բուրբ ,

Անկեղծ ըլլար յաւիտեան՝

Խինդին փարած ժամանակ , վիշտով ուռած ժամանակ
նուրբ . . . :

Երբոր սիրտէս այն պարզունակ զգացումներս գացին ,
Երբ հոգիէս հաւատքի մը պարզ հմայքներն ալ թը-
ռան ,

Ու երբ միտքս իբ պարզ խոհերն անհետեց ,
Այն ատեն լոկ ցաւով տեսայ որ բաղձանքներն իմ
անկեղծ ,

Մէկիկ մէկիկ էութիւնէս փախեր են ,
Յաւէտ անկեղծ մընալու
Վսեմ ո՛ւխտս ալ , տեհչա՛նքս . ալ՝
Լոկ փշուրներ է ձգեր . . . :

Ու գիտցայ թէ վերջապէս ,
Հոն ուր սէրը , հոն ուր կեանքը պարզութենէ կը
դադրի ,
Հոն ուր սէրը , ուր հաւատքը պարզուկ փայլն է մեր-
կացած ,

Հոն կեղծիքը կը տիրէ , կեղծիքը շուտ կը տիրէ :
Ու կեղծիքներ երբ տիրեն ,
Հոն պատրա՛նքն ալ կը մտնէ ,
Հոն կոտտա՛նքն ալ կը մտնէ . . . :

Ու կը սպասեմ որ բոլոր
Խառն հաճոյքներս անհետին ,
Բիրտ տարփանքներս ալ մեղմիկ անհետանա՛ն հոգիէս ,
Ու սէրերս ալ նոր թարմութի՛ւն մը առնեն :
Ամբողջ կեանքով անկե՛ղծ ըլլալ կ'ուզեմ ա՛լ ,
Հոգիս անկեղծ , միտքս անկեղծ ,
Անկեղծ բոլոր վտիտ խորքերն իմ սիրտիս . . . :





ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

Այտերըս անդուլ ջինջ համբոյրներու
Շամբուշ բաղձանքնի՛ր ունեցան բոլոր .
Ուզեցին զգալ հուրքով մեղմօրօր՝
Երկու թաւիչներ՝ կցուած իրարու :

Ու սպասումէն պարտասա՛ծ համակ ,
Այտերըս տենդստ յուզում մը առին ,
Խօլ բաղձանքներու հըրայրքը լըռին՝
Ցաւի գոռ տենդ մը ձգեց հոն մինակ :

Տագնապներու տակ ընկճուած արդէն
Հեշտ զովացո՛ւմ մը միայն կը բաղձան .
Թող հպին ճակտիս ծածանքներ դեղձան ,
Թող զով համբոյրնե՛ր ալ հոգիս կարթեն :

Թաւիչէ շրթունք , ինչո՞ւ կ'ուշանաս ,
Տժգոյն այտերուս ա՛լ զովացք մը տուր ,
Եկո՛ւր զովացո՛ւր երեսներըս հուր ,
Սպեղանի՛ մը ցանցընէ՛ վըրաս . . . :

Արցունքի՛ս կաթիլ, գոնէ ւո՛ւն հոսէ,
Այտերուս վըրայ ցրտացում մը դիր.
Քու շիթերուդ տակ հեշտ ու թովալիր,
Այտս նոր թո՛յր մը կ'առնէ սնդուսէ:

Աչքերս ալ արդէն բռն ունին վիշտին՝
կոտտանքներո՛ւ տակ կքած հրակէզ,
Ու երբ արցունքը կաթկթի՛ աչքէս՝
կոպերս ալ իրենց ցաւէն կ'ազատին:

Արցունքի՛ պտղունց թոյրովդ արծաթէ,
Այտերուս վրայ կաթէ՛ տրտմավար,
Կաթէ՛ ա՛լ անվախ թոյլ աչքերէս վար.
Կաթէ՛ ի՛նչ կ'ըլլայ, կաթէ՛, ա՛հ, կաթէ՛ . . . :





Կ Ա Ր Օ Տ Է Դ

Ա՛լ բաժանումըդ շա՛տ երկար տւեց, ինչո՞ւ չես զգար,
Կարօտդ քուրդ զիս տազնապալից էակ մ'է ըրեր:

Մի՛ վախնար, տենդոտ տարփանք չեմ ցայտնած ու-
րիչքն համար,
Հեշտանքի վրայ չե՛մ փորհած բընաւ երթալէդ ի վեր:

Բաժանումըդ դեռ սէրը իմ մէջէն բընաւ չէ՛ զտտած,
Երագո՛ւն հուրի, ասկէ աւելի ի՞նչ կը փափաքիս,
Անյուսութիւնը դեռ բոլորովին հոգիս չպատած,
Եկո՛ւր, անգամ մը գոնէ զովացո՛ւր փշրուած հոգիս:

Ա՛յն բիւրեղ սէրը, որ զիս գըրաւեց խանդով մը ան-
հուն,

Առանց այս մաշող տենդոտ կարօտիս չէ՛ր զգար դեռ.
Հաճոյքներն արդէն պիտի չերևի՞ն աւելի ցայտուն՝
Երբ արդէն ցաւը քանի մը փայրկան սիրտն է դըր-
դեր....:





Կ Ը Ձ Ա Ն Ձ Ի Ա Ն Ա Մ . . .

Իմ պատանի բաղձանքներըս անհամար,
 Յոգնա՛ծ են ա՛լ, պարտասա՛ծ՝
 Երկարատև անուրջներով սպասելէ՛ն ընդերկար . . .
 Մտածումներս ալ բոլոր,
 Սպասումէն յոգնած, դադրած, վհատած,
 Յուսակորո՛յս կը մընան:
 Կեանքոտ խանդն ալ հոգիիս՝ պատրանաթա՛փ ու
 նկու՛ն՝

Նոր ու հուրքոտ երազներու կը բաղձայ . . . :
 . . . ու ձանձրոյթի նոպաները տազնապող,
 նոպաները սրտացունց,
 Հեռոզհետէ հոգիէս ներս կը սահին:
 Կը ձանձրանամ, կը ձանձրանամ . . . :
 Մէկը չկայ փութացող՝
 Իր հմայքը խառնելու սիրտիս ձանձրոյթին,
 Նոր բաղձանքներ ալ չունիմ,
 Կեանք մը տալու արդէն խամբած իղձերուս՝
 Որոնք ձանձրոյթը բերին .
 Հեշտանքները փախա՛ծ են,
 Տարփանքներն ալ խոյս տուած յոգնած հոգիէս .
 Բան մը չունիմ վայելքի՝
 Ուր ձանձրոյթս փարատեմ,
 Յոյսերն ալ արդէն մեռա՛ն ներսիդիս:
 Հազիւ քանի մը վայրկեան
 Հինցած յուշերու վայելքը կուգայ պաշարել հոգիս,
 Պահ մը անոնց վերջուղումովս օրօրուն,
 Հսկայ ձանձրոյթն ա՛լ ինձմէ կարծես հեռո՛ւ կը
 փախչի .

Բայց այդ զուարթ վայելքներու անցեալին՝

Ա՛յնքան քիչ են որ կրկին,

Մէկ պահէն,

Հողիս կարծես իր տաղտուկին ցանցերուն մէջ կ'ըն-
կըմ'իս .

Ու քանի մը վայրկեանի մոռացումէ մը յետոյ՝

Հիմայ կարծես աւելի՛

Կը ձանձրանամ, կը ձանձրանամ . . . :

Երազներու վայելքները կ'ուզեմ ես,

Փարատելու համար տապը ձանձրոյթիս .

Անէացումը թող պատէ՛ հողիս՝

Գոնէ պահիկ մը այս ձանձրոյթներուս

Հսկայ սարտուռէն փրկելու համար .

Անէացումը աւելի՛ քաղցր է ձանձրոյթէն յողնած
Թոյլ երակներուս . . . :

Վնաս չունի՛, թող կսկիծներ՛ր պատեն զիս,

Թող թախիծներ՛ր պաշարեն՛ս իրտըս համակ ծանրացող .

Վնաս չունի՛, թող մորմոքը սարսէ՛ զիս,

Թախծանքն աւելի՛ քաղցր է ինձ համար,

Այս ձանձրոյթի պահերուս .

Թող ցաւերու երաշխէ՛պը ընդունիմ,

Հող չէ՛, ցաւը ցնցէ՛ զիս,

Բայց փոխարէն պահ մը լոկ՝

Ձանձրութիւնըս փարատի, ա՛խ փարատի՛, փարա-
տի՛ . . . :

Ու երբ ասոնք չեն գար ինձ,

Երբոր հեռու կը մընան տինդոտ հողիս մեղմելու,

Բիրտ սարսուռը տաղտուկիս,

Ա՛լ աւելի կը գալարէ՛, կը պրկէ՛

Իզձերըս վճիտ :

Ու զգայաթա՛փ,

Առաջուրնէ աւելի՛ սաստիկ, աւելի՛ թափով,

Կը ձանձրանամ, կը ձանձրանամ . . . :



Գ Ն Չ Ո Ւ Հ Ի Ն

Հրեշտակի աչքեր ունի, հուրինսրո՞ւ ալ բերան,
Սիրտն ու հոգին լեցուն սէրով ու կարթումով մը
վայրի-

Իր մէջ բնութեան դեռ չծլած բիրտ սէրն է որ լոկ
կ'այրի,

Լերան աղջիկն է ան քնքուշ, անփոյթ աղջիկը լերան:

Մազն ալ սիրուն՝ անփոյթ ձգուած ծածանքովը տա-
րուբեր՝

Դէմքին շուրջը հըրապուրող սիրուն ցայտքեր կը
հիւսէ.

Իր անխընամ հագուստէն ներս շառայլներ կան սըն-
դուսէ,

Զոր հոս ու հոն կը ցանցընէ բոլորովին անտարբեր:

Ծիծաղ մ'ասոր կը նուիրէ, երկու ժպիտ ալ անոր,
Ու անխահեմ հըրապոյրներ կը բաժնէ՝ ան ամէնուն,
Զինքը գգուող ակնարկներ կան, խնդրող աչքեր ալ
անհուն,

Որոնց գիտէ պատասխանել թոյլ ժպիտով մը աղուոր:

Մէկուն՝ միտքով սպագանի՞ր ալ կը շինէ ան հեշտին,
Ուրիշի մը՝ թախծոտ լուրեր կը գուշակէ անտարբեր:

Միշտ բերնին մէջ աւետիս մը, մաղթանք մը կայ
անհամբեր
Գնքուչ ձեռքով թոյլ բազումներ կը ցանցընէ երբ
գետին:

Վճիտ ձայնը մերթ ցոյց կուտայ զինք օրօրող հովե-
րուն,
Սիրտին խորէն ցայտող երգ մը կը մըմնջէ անվիհներ.
Իր ժպիտով կ'ուզէ ցնցել ո՛վ որ իր շուրջն է պատեր՝
Ու երգովն ալ, ով որ իրեն մտիկ կ'ընէ քիչ հեռուն:

Ու կիւսական իր մարմինին կուռ ցայտքերը ցցելով,
Դափերուն հետ մերթ կը գառնայ շրջապար մը վէտ-
վէտու ն.
Իր նազանքոտ թոյլ ձևերը պոնդ մը նետած պահե-
րուն,
Իր անխընամ այդ սև գէմքը թոյրե՛ր կ'առնէ ակ-
նաթով:

Մինչև իրկուն յափրանքով մը կոյս լեռները կը
չըջի,
Հարսնուկներէ, նունուֆարէ հեշտին փունջեր կը
կապէ,
Ան չի՛ քաշուիր ո՛չ ցուրտերէն, ո՛չ արեւէն, ո՛չ
առապէ,
Այլ բընութեան կոյս գիրկերուն աղջիկն է ան ա-
նուրջի:

Հին կողով մը նետած իր կուռ ու հնամայքոտ ուսե-
րուն,
Այդ լեռները վարատական կը թափառի շարունակ.

Շրթունքին քով մրմո'ւնջ մը կայ, ժպի՛տ մըն ալ՝
աչքի՛ն տակ,
Հողին անհուն վայելքով մը, սիրտն ալ սեղով օրօ-
րուն :

Կուրծքը բացած ան շարունակ, մազն ալ ձգած ու-
սերուն,
Ան բնութեա՛ն կուտայ ցուքերն ու հեշտանքներն իր
պատմի՛,
Կեանքի ձանձրոյթն իր կուրծքին տակ, իր սիրտին
մէջ կը հասնի,
Բնութեան ազլիկն է ան վայրի, բնութեան ազլիկը
սիրուն ... :





Հ Ո Վ Ի Ն

Հովիկ, գեղերուան հովիկ,
Քու զովակաթ համբոյրներովդ մելանուշ՝
Յկու՛ր, ճակատըս օձէ,
Ուր տագնապներ բո՛յն դըրած են՝
Երկարատե սպասումէն, հսկումէն,
Ուր վառ տենդեր կը տատանին,
Կը տատանին անընդհատ՝
Մեղկ հոգիիս հեշտացընար ու սիրաբազձ կարօտէն :
Յկու՛ր հպանցէ հրուտ այտերուս,
Որոնք թաւիչ հպումներո՛ւ բաղձանքով
Սպասած են ընդերկար .
Ու պատրանաթափ՝ այդ համբոյրներուն առթած հը-
մայքէն ,
Բոլորովին յուսախա՛ր ,
Քու հպանցումիդ զովացումովը գո՛հ կ'ուզեն մընալ :
Յկու՛ր փայփայէ հըրայբք՝ դէմքիս ,
Քանզի քու զովուկ համբոյրներդ մեղրակաթ ,
Հեշտանքէ՛ն աւելի բաղձալի են ինձ :
Հովիկ, գգուանո՛ւտ հովիկ,
Երբ ճակատըս ու այտերս զովանան ,
Նոյն ալիքներով հոգիէս նե՛րս ալ խուժէ՛ ,
Որ իր հըրատապ երկունքներուն մէջ ,
Իր ձանձրոյթի տառապեցնող նոպաներուն մէջ ,
Բոլորովին պրկուած , բոլորովին ցնցուած ,

Զովակարօ՛տ կը սպասեն :
 Քու գովատու պոնդերովըդ սիրտէս նե՛րս ալ ,
 Ուղղակի նե՛րս թափանցէ ,
 Ուր սէրերըս յուսախար՝
 Թող գգուանքէդ կարթուին ,
 Ու իրենց կսկիծը մոռնան
 Պահիկ մը գոնէ . . . :
 Կեցի՛ր դեռ հոտ ,
 Մինչեւ որ հոն պատրանքներըս անհետին ,
 Սէրերըս թուլնան ,
 Մինչև որ հոն տարփատինչ զգացումներըս սրբուին ,
 Սէրերըս ալ նոր թարմութի՛ւն մը առնեն :
 Հովի՛կ , պաղպաղո՛ւն հովիկ ,
 Շարունակէ՛ համբոյրներդ ցայտեցընել երեսիս ,
 Մինչև որ անոնք՝
 Զինջ համբոյրներու պատրա՛նքը տան ինձ ,
 Ու այդպէս խոկո՛ւն ,
 Կեցած գինովնա՛մ . . . :





Մ Թ Ն Շ Ա Ղ Ի Ն Կ Ո Յ Ա Ը

Գուժը ձգած իր ուսին՝
Ազրիւր կ'երթայ յուլօրէն.
Արբուսով մը կը ծծէ
Մութին հմայքը բոլոր:

Տարփանքները կը մտն'ն՝
Զովուկ օդին հպումէն,
Երբ մարմինն ալ կը ցցէ
Ցայտուն գիծերն իր աղաւոր:

Յնցող բոյրեր հոսւան՝
Իր պատանի իղձերուն
Կոյս հմայքներ կը ջամբեն,
Ու սիրտին մէջ կը պաղին:

Ստուերները իրիկուան
Մեղմիկ փռուած են հեռուն.
Շատո՞նց անցան իր ճամբէն՝
Զիլ ձայներն ալ հօտազին:

Ձոյգ պտուկները ճապուկ
կը կաթկթին իր կուրծքէն,
Ու շարժումին համեմատ,
Կ'երերտկան, կը կախուին:

Մերկ սաքերը խուօափուկ,
Նրբին հետքեր կը ձգեն,
Յօղին վերայ մեղրակաթ՝
Թաւշազօծուն մարմանգին:

Իր մարմինի ձևերուն
Փաղփուկները արծաթէ,
Թո՛յլ կոլտայ որ կաթկթին
Արբուսով մը մեղկօրէն:

Լանջքին հուրքը սևեռուն՝
Ուղխօրէն ցո՛ւրտ կը ցայտէ,
Գեղջուկ վտիտ հագուստին
Անփոյթ ձգու՛ած ցանցերէն....:





Գ Ի Շ Ե Ր Ի Ն

Գիշեր, տարփալի՛ գիշեր,
 Մտածումներս, խանդերըս համակ քեզի կը բաղձան,
 Քանզի ցորեկի գոլուտ արեւին ճաճանչներուն տակ,
 Մտածումներս կը թուլնան,
 Խանդերըս ալ կը կաթոտին,
 Ու կը հալին, վա՛ր կ'իյնան տարփանքները հոգիիս .
 Քանզի ցորեկի փաղփուռն լոյսին մէջ,
 Զգացումս կը հատնի,
 Ճերմակ կէտ մը կը դառնայ .
 Հոգիէս ցայտող տարփանքն ալ վճիտ,
 Այդ պսպղուն երազկոտ յորդ լոյսերուն հետ՝
 Կը խառնուի՛, կը հատնի՛,
 Կամ շառայլներուն չկրնալով դիմադրիլ,
 Բոլորովի՛ն շըլացած՝
 Թերթ Թերթ թուլտամ վա՛ր կը թափթփի . . . :
 Իսկ դուն, ո՛վ գիշեր,
 Քու հեշտաւէտ գիրկիդ մէջ,
 Բաղձանքներս պիտի գգուես մեղկօրէն .
 Շափառուկդ ալ մշուշէ՛
 Տարփանքներս իր ծալքերուն մէջ առած,
 Փայփայանքի մեղկ համբոյրով տարտամօրէն պիտի օծէ:
 Լոյսին տուած խողտանքը չունի՛ս դո՛ւն՝
 Որ ակնարկը կը գըրաւէ, կ'արիւնէ,
 Այլ խուսափուկ
 Մեղմ ոտուերներ ես պահած՝
 Որ նայուածքէն զատ
 Հոգի՛ն ալ կարծես կը հրապուրէ . . . :

Գիշեր, բաղձալի՛ գիշեր,
 Մշուշովըդ ամպեղէն՝
 Յեղձը պարուրէ անհունը սիրտիս .
 Քանզի հո՛ն ալ քեզի պէս շափառուկը կը տիրէ :
 Սիրտի՛ս մէջ ալ քեզ նման՝
 Տարտամ մշուշներ տարողնած են լոկ :
 Քու խաւարչուտ աչքերուդ պէս խօլային՝
 Հոգի՛ս ալ լոյսին բաղձանքը չունի ,
 Կը բաղձայ մութի՛ն՝
 Ուր իր փայլուն երազները յտակօրէն պիտի ցայտեն ,
 Մութի՛ն կը բաղձայ՝
 Ուր իր հրատապ տարփանքները պիտի զովանան ,
 Տենչանքներն ալ պիտի հանդարտին ,
 Յոգնա՛ծ , պարտասա՛ծ՝
 Երկար օրեր հմայաթափ սպասելէն :
 Գիշեր , ի՞նչ հեշտին ,
 Երազներ պահած ունիս խորքիդ մէջ .
 Հոգիս արդէն երկարատեւ բաղձանքն ունի երազի ,
 Ու սիրտըս ալ երազելով կ'սուգէ գտնել ցուրտ հաշի-
 շը անէանքին :

Որքա՛ն զովութիւն
 Պահած ես սիրտիս տենդոտ հուրքերուն ,
 Ուրա՛ք հրայրքէն մարմրա՛ծ են ալ ,
 Ու նոպաներու ձանձրո՛յթը ունին յաւիտենական :
 Գիշեր , հովի գգուանքներդ ալ պիտի բերես ,
 Որ հպանցեն զովակարօտ հոգիիս .
 Գիշեր , պո՛ւտ մըն՝ ալ մութի պէտք ունի հոգիս՝
 Յտակօրէն ի՞ր ալքերը դիտելու , զննելու համար . . . :





Շ Ա Տ Ր Ո Ւ Ա Ն Ի Ն Պ Է Ս

Շատրուանին ցայտքերուն պէս մոզական,
Սիրտս ալ տենդոտ իր երազները ունի,
Որոնք սիրտէս ցնցուղներով կը պոռթկան՝
Տարտղնելով թոյլ օդին մէջ հուանի:

Ու հազիւ թէ քիչ մը ատեն կը շողան՝
Երազներըս փայլերուն տակ արևին,
Շատրուանին ցայտքերուն պէս մոզական՝
Զգայաթափ կաթի՛ր կաթի՛ր կը թափին:

Կը ցնցուին անյուսուլթեան հպումէն,
Շատրուանին ցայտքերուն պէս մոզական՝
Զոր հովերու քմայքները կը ցնցեն,
Եւ որոնք վար կը թափթփին անկենդան:

Պատրանքներու տրհաւիրքէն կը սարսին,
Սթափումի գոռ երկիւղէն կը սոսկան,
Ու ուժասպառ կը թափին վար մեղմագին՝
Շատրուանին ցայտքերուն պէս մոզական . . . :





ԱՆՈՒՇ ԽՕՍՔԵՐ

Թող իր մարմինը երանգներ աղու ,
Ու ցնծուն փայլեր ստանայ կարթող .
Իր սիրտէն ցայտած հըրապոյրն ալ թող
Էութեանըս մէջ ցնցում մը թողու :

Այդ բիրտ ցնցումը կը բաւէ արգէն ,
Որ սիրտէն ներս ալ հուրքեր սպրդին ,
Այդ հուրքերէն վերջ՝ տխուր ու հեշտին՝
Սիրտըս ու հոգիս պիտի մտածեն :

Ու մտածումը հոգիս սարսելով՝
Քաղցրաւէտ յուշեր պիտի սփռէ հոտ ,
Մտածումէն ետք սիրտիս մէջ տենդոտ ,
Նոր նոր բաղձանքներ պիտի գան փութով :

Այդ բաղձանքին հետ մարմինն ալ փաղփուն ,
Կանցնի՛ հոգիիս վտիտ ալքերէն .
Ու իր ձևերն ալ զիս պիտի գերեն՝
Կարթսււմով մը ջինջ ու միշտ երազուն :

Ու երբ կարթումը պատած է հոգիս ,
Սիրտիս տենդոտած խորքերը նկուն՝
Պիտի զովանան թովքէն աչքերուն ,
Սէրի մը ցայտքն ալ պիտի ցնցէ՛ զիս :

Ու երբոր սիրե՛մ , ա՛լ պիտի սիրե՛ս . . . :



Լ ՈՒ Ս Ն Ա Կ Ի Ն

Անուշիկ լուսնակ,
 Պատուհանիս մութին առջև մտամուրը կը սպասեմ,
 Ե՛րբ պիտի գաս թոյլ ցուքերդ կաթկթել՝
 Սիրտիս մթին խորքերուն
 Երազուն:

Հոն ցաւը կո՛յ, հոն ուռճացած ցա՛ւն ալ կայ,
 Տր տմութիւնը կա՛ր արդէն,
 Ու երբ, լուսնա՛կ, կարօտըդ ալ սահի հոն,
 Այդ ցաւերուն գիմագրելու անկարող,
 Բիրտ կոտտանքներ պիտի ցնցին զիս անդադար պըր-
 կելով:

Հասի՛ր շուտով, լուսնա՛կ, հասի՛ր ճշոյններովդ հասիր,
 Ու իրիկուան այս մութին մէջ,
 Հեշտ շառայլներ ցանցնէ՛:

Ա՛խ, գիտնայիր թէ քեզ որքա՛ն կը սիրեմ,
 Ա՛խ, իմ լուսնակ երազուն.

Դո՛ւն ալ ինձ պէս մութ գիշերին բաղձանքները ու-
 նիս լոկ.

Դո՛ւն ալ ինձ պէս մթութիւնը կը սիրես,
 Դո՛ւն ալ ինձ պէս ցաւերն ալ:

Գորչ անպերու սև մաւայլներ մերթ քու գէմքդ կը
 պատեն,

Իսկ իմ հոգիս ամէ՛ն գիշեր պատած են՝
 Մաւայլ ցաւեր, սև ծուէններ ամպերու . . . :



ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՊԱՇԵՐ

Վայրկենական սարսուռ մը հոգիիս մէջ կը ծագի,
Մէկ պահի մէջ ամէն բան կը դարձնէ իր գերին.
Այդ սարսուռէն ցանցնուող պիրկ նուպաներ մեղմակի՝
Հոգիիս մէջ, սիրտիս մէջ արագ արագ կը շրջին:

Ու սարսուռը հոգիէն թոյլ աչքերուս կը ցայտէ,
Ու աչքերըս կը դառնան, ինքնիրենց մէջ կը դառնան.
Շուրջիններս ալ չորս դիս պար կը դառնան հետզհետէ,
Գլխուս մէջ ալ ամէն իր՝ վազք մը կ'առնէ անտահման:

Ա՛լ կը մոռնամ ամէն բան տազնապանքով մը անշէջ,
Ամէն բան ցուրտ ու տժգոյն ու մթամած կը կարծեմ.
Ու պտո՛յտ մը գլխուս մէջ, պտո՛յտ մըն ալ սիրտիս մէջ,
Ա՛լ մոռցա՛ծ եմ ամէն բան, ինքզի՛նքս ալ մոռցած եմ:

Ու կիրքերը ա՛լ հոգիս լոկ խաղալիկ մը կ'ընեն,
Ու կիրքերը ա՛լ լեզուս խաղալիկ մը կ'ընեն լոկ,
Ու կիրքերը խաղալիկ կ'ընեն իզձերըս ամէն,
Լոկ խաղալիկ մը կ'ընեն զիս կիրքերըս անողոք

Ու կիրքերըս երբ թուլնան, ու կիրքերըս երբ մարին,
Ալ ամէն բան իր նախկին թոյլ վիճակը կը գտնէ,
Ամբողջ հոգիս գրգռուած՝ կը հանդարտի ա՛լ կրկին,
Հանգիստ մըն ալ վերստին սիրտիս խորը կը մտնէ:

Ու երբ կ'անցնի այդ նոպան, սի'րտս միայն կը ցաւի,
Մինչդեռ միտքըս ու հոգիս մոռցա՛ծ կ'ըլլան ամէն բան.
Սպի մը գուռ ու վայրագ, չորցած զոր հետք մը ցաւի,
Դեռ սիրտիս մէջ արցունքով իրենց յուշերը կ'ողբան:

Ու ան բընաւ չի շքաւիր որ այդ կիրքերն հաշիշէ՝
Սիրտս ու հոգիս ու լեզուս խաղալի՛կ մը ըրեր են.
Իր՝ սուգին մէջ սիրտս յլոկ՝ ա՛յն թախիժը՝ կը յիշէ՝
Զոր սիրելի սիրտերու տուաւ կիրքովն անօրէն...:





ԱՆԷԱՑՈՒՄ

Թող աչքերուդ
 Գինովցընող պուտ մը հաշիչ ցրցքնեն,
 Ու այդ հաշիչը տակաւ
 Անցնի աչքերէս՝
 Երակներուս փափկութեան մէջ վալարուի,
 Երակներէս ալ անցնի,
 Միրտիս ոլորտը անէացընէ,
 Ու այդպէս մընամ,
 Մինչեւ որ հուրքս, խանդս սպառի.
 Անէացումի պէտք ունի՝ հոգիս՝
 Կեանքը լիովին
 Ըմբռչխնելու համար:

Սակայն պէտք է քայքայուիմ,
 Էութիւնս տարտըղնի.
 Եւ այդ վիճակով
 Ամէն բան մոռնամ զգայակորոյս,
 Անհետանայ ամէն բան՝
 Խաւարաբաղձ աչքերէս:
 Ու քայքայո՛ւն,
 Հոգիս սէրը չզգայ թող,
 Զգացումներս անհետին
 Ու չոր ոսկոր մը դառնամ.
 Քանզի տենդօրէն անէանալու բաղձանքիս համար,
 Քայքայում մը պէտք է ինձ,
 Քայքայում մը՝ իր պարիկէ թեւերով՝
 Թող գայ գգուել բաղձանուտ
 Թոյլ ոլորտը հոգիիս:

Սէ՛ր մը կ'ուզեմ տարփալիւր ,
Վճիտ փայլով շողակնի՛
Ուր ամէն բան երեւի պայծառութեան մէջ՝
Մարմինըս բոլոր՝
Տենդոտ ու զեղսն հեշտ սէրի մը կը բաղձայ ,
Զգացումներըս սէրի պէտք ունին ,
Սէրի՛ պէտք ունի տարփազեղ հոգիս ,
Սէ՛ր մը կը տհնչայ էութիւնըս ալ .
Քանզի այդ սէրով կրնան միայն քայքայուիլ
Ու թերթ թերթ թափիլ՝
Լոյս ծաղիկները սիրտիս :

Տենդոտ հըրապոյր մը թող տրուի ինձ՝
Որուն թովանքը կատարեալ ըլլայ ,
Զգայացունց պահերուս՝
Այդ հըրապոյրը կ'ուզեմ ,
Յուսահատած պահերուս ,
Նոյն թովալիւր հըրապոյրը կը ցանկամ .
Քանզի զօրաւոր սէրի մը համար՝
Հզօր ու տենդոտ հըրապոյր մըն ալ անհըրածեշտ է :

Ու երբ այդ ցնցող հըրապոյրն զգամ ,
Սիրտըս այդ վսեմ սէրին ցայտքերով պիտի ուռննայ ,
Ու պահի՛կ մըն ալ ,
Պահի՛կ մըն ալ դեռ ,
Ա՛լ կ'անէանամ . . . :





Յ Ա Փ Ր Ա Ց Ո Ւ Մ

Շատ ապրեցայ ա՛լ այս սին երազով,
Թօթափումը ա՛լ թող հասնի անոր:
Զգացումներս ձանձրացա՛ն բոլոր,
Թող չուշանայ ինձ սթափումը զով:

Երազին հմայքն զգալու համար,
Վայրկեան մը անկէ դադրիլ պէտք է ա՛լ:
Լոյսին կարթումը կարո՞ղ ես զգալ,
Երբոր լոյսի մէջ կ'ապրիս անդադար:

Ա՛լ երազներն ալ ձանձրալի հղան,
Նոր խանդ, նոր աւիւն կը բաղձայ հոգիս:
Անէացումը թող պարուրէ զիս,
Մոռացման պահեր վըրաս թող տեղան:

Այդ միօրինակ տենդոտ երազէն,
Այդ կերպով կլնեամ ազատիլ գոնէ:
Անէացումի աշխարհը հո՞ն է՝
Ուր իղձերս արդէն պատրաստ կը սպասեն:

Տեղ մը կը յանգի կեանքի այս ուղին,
Ուր մահուան վախեր զիս պիտի պատեն:
Անէացումով դեռ ատեն ատեն՝
Գոնէ վարժուի՛մ մահուան երկիւղին:

Վիշտի կեանքիս մէջ ցա՛ւը զիս ծընաւ ,
Ու այդ ցաւէն վերջ սէր մը բաղձացի ,
Որ լոկ կոտտանքներ զգացուց ինձի ,
Եւ ուրկէ հուրք մը չմնաց բընաւ :

Այդ կոտտանքները ուզեցի վանել՝
Սահմաններուն մէջ վճիտ երազիս ,
Սակայն մորմոքներ հո՛ն ալ տուին զիս ,
Ու առջիս բացին ճամբայ մը անել :

Կեանքիս այս փշոտ ցից ճամբան տրտում ,
Կը կարծէի թէ դրախտ կը տանի .
Ու առջիս մընաց ցաւ մը կենդանի ,
Կամ մահուան ցո՛ւրտը , կամ անէացո՛ւմ . . . :





Ի Ր Ի Կ Ո Ւ Ա Ն Դ Է Մ

Երազներըս բոլոր,
 Ելան ու գացին,
 Բաղձանքներն ալ խոյս տուին հոգիիս մէջէն՝
 Ուր պատրանքները մենիկ,
 Այս պահուն,
 Անհուն մը ցաւ կը հեծեծէի տխրունակ.
 Յոյսերս ամէն հըրածին՝
 Ինձմէ հեռու են արդէն,
 Հեռո՛ւ, շա՛տ հեռու, երջանկութենէ՛ն ալ հեռու:
 Սէրերըս վըտիտ
 Այնքան հըրավառ նայուածքներու հանդիպեցան,
 Որ չկրնալով տակալ,
 Ինկան, վար ինկան, հալեցան լըռիկ.
 Ու ես մինակ մնացած,
 Ու զրկուած ամէնէն,
 Սիրող սիրտի մը ի զո՛ւր կը տենչամ:
 ... Հեռո՛ւն,
 Արեւին անհետացող շառափները կը մարմըրին,
 Մինչդեռ ես ասդին բոլորովին հիասթափ
 Պատրանքներու հսկայ երկունքը կը տանիմ դող-
 դըղալէն...

Հորիզոնը հըրավառ
 Թրթըռուն շողերու ծածանք մը ունի,
 Սակայն սիրտիս մէջ այդ շառայներէն՝
 Ոչ իսկ նշոյլ մը կրնայ թափանցել,
 Վասն զի սիրտիս ցոլք տալու համար,
 Ճնցուղ մը շող
 Զի՛ բաւեր...



Վ Ե Ր Զ Ա Լ Ո Յ Ս

Նուազ շողեր կը մարմըրին ալ հեռուն
կը թրթըռան վերջին պահերն արեւին .
Հմայքներն ալ անհետացող ցուքերուն՝
Դեռ ամէն կողմ կարծես ցրուած կ'երևին :

Վէտվէտումներ թոյլ երկինքը կ'օրօրեն ,
Մեղ-՛ երանգներ կ'առնեն ամպերն ալ ձիւնէ ,
Փունջ մը ոսկի լոյս սլաքներ յուլօրէն՝
Հորիզոնի ասմազունը կ'արիւնէ :

Բոց երկունք մը կը հըլստի շողերու ,
Զինջ ամպերն ալ միշտ երանգներ կը փոխեն ,
Շող ու ստուեր կ'ընդելուզուին իրարու ,
Հորիզոնն ալ կը սարսըռայ իր գողէն :

Ամէն վայրկեան տարբեր տեսք մը կը փայլի ,
Բընութիւնը հազար ցուքով կ'երծուայ ,
Արեւն հիմայ շառագնելով կ'այլայլի ,
Ու քիչ մը վերջ ամպին ետեւ կը հեկայ :

Շառափները իրենց տխուր յուզումէն ,
Հալածուելով ստուերներէ մթամած ,
Մօր մը գրգոտ բազուկներուն կը դիմեն ,
Ամբողջ օրը ցուցըլալէ պարտասած :

Ու երբ շողուն այդ շառայլներն անհետին՝
Ծով մը սուռեր ալ ամէն կողմ կը պատեն .
Յուզերով լի վերջալոյսի մը, ետին՝
Հոծ մթութեան շափառո՛ւկը կայ նորէն :

...Կոյս երազներս ալ շատ երկար սպասած ,
Հալածուելով սթափումսի երկիւղէն ,
Պահ մը հազի՛ւ զովոցեր են լուսացած՝
Ու պատրանքը եկեր հասեր է արդէն :

Ու երբ հըրուտ երազներըս տենդորէն՝
Լքուն սիրտիս սահմաններէն խոյս կու տան ,
Յաւեր իրենց լուռ կսկիծը, կը բերեն՝
Անուրջներու հմայքէն ետք անկենդան :

Սիրտս ալ այդպէս իր վերջալոյսն իսկ ունի ,
Իր շողերը կը մարմըրին ցաւերով ,
Կը թափթփին բոլոր իղձերս հոլանի՝
Հողիւ երկնած պաշտամունք մը հոգեթով :

... Հորիզոնի վերջալոյսէն ետք նրբին՝
Յաջորդ առտուն նորէն ցոլքեր կը շողան .
Մայրամուտէն վերջ բայց սիրտիս խայտանքին՝
Նոր, երազներ չպիտի գան յաւիտեան . . . :





Խ Ռ Ո Վ Ք

Մազերուդ ,
Հըրապոյրին տակ
Կ'ուզեմ մոռնալ ամէն բան .
Մոռնա՛լ աշխարհը , ցաւերը անոր ,
Սէ՛րըս ալ մոռնալ :
Եկո՛ւր , տարածէ՛ զանոնք ,
Դալկահար ճակտիս ,
Եկո՛ւր , քումայթ վարսերուդ
Թովքը տուր ինծի .
Քանզի անոնց պէտք ունիմ ,
Պէ՛տք ունիմ քեզի ,
Ու դուն անոնցմով ,
Գգուէ՛ զիս , գգուէ՛ , մինչեւ որ կարթես . . . :


Աչքերուդ ,
Թովանքներուն մէջ ,
Կ'ուզեմ տեսնել ամէն բան .
Տեսնե՛լ աշխարհը , հաճոյքներն անոր ,
Սէ՛րըս ալ տեսնել :
Եկո՛ւր , հրայքովն անոնց ,
Հոգիէս ներս թափանցէ ,
Եկո՛ւր , անոնց հուրքովն ալ ,
Սիրտս խաղաղէ՛ .
Քանզի անոնց կարօտ եմ ,

Կարօ՛տ եմ քեզի ,
Ու գուն անոնցմով ,
Կարթէ՛ զիս , կարթէ՛ , մինչեւ որ յուզես . . .

Այտերուդ ,
Վարդերուն առջին ,
Կ'ուզեմ զոհել ամէն բան .
Ձահել աշխարհը , հեշտանքներն անոր ,
Մէ՛րըս ալ զոհել .
Եկո՛ւր վառքովը անոնց ,
Պաշտե՛լ տուր զքեզ ,
Եկո՛ւր անոնց շողին հետ ,
Դէ՛մքդ ալ շողացուր ,
Քանզի անոնց պէ՛տք ունիմ ,
Պէ՛տք ունիմ քեզի ,
Ու գուն անոնց հետ ,
Յուզէ՛ զիս , յուզէ՛ , մինչեւ որ սիրես . . . :

Ու կուրծքիդ
Հմայքին վըրայ
Կ'ուզեմ սիրել ամէն բան ,
Սիրել աշխարհը , վայելքներն անոր ,
Ջքե՛զ ալ սիրել :
Եկո՛ւր , կուրծքդ հոլանի ,
Դիր դալկացած իմ կուրծքիս ,
Եկո՛ւր փայլովը անոր ,
Հըրապուրէ՛ զիս .
Քանզի կարօ՛տ եմ ,
Սիրոյդ հմայքին ,
Ու անո՛վ միայն
Կարող եմ ապրիլ ,
Սիրէ՛ զիս , սիրէ՛ , մինչեւ որ մոռնաս . . . :

Ու վայելքիդ
Խորանին առջին,
Սէր մը բուրվառեմ,
Որուն ծուխը բարձրանայ,
Շա՛տ վեր, մեզմէ՛ վեր,
Երկինքէ՛ն ալ վեր:
Եւ այդ ծուխը՝ պարեկի
Խայծը թող տայ քեզ,
Մինչեւ որ ալ դուն,
Լաւ մը գինովնաս,
Լաւ մը կարթուիս,
Ու ալ զիս մտնաս:
Քայց այն ատեն ալ
Պէ՛տք ունիմ քեզի.
Մոռցի՛ր զիս, մոռցի՛ր, մինչեւ որ յիշես....:





Լ Ա Յ Ի Գ Ի Շ Ե Ր

Իզձերըս բոլոր ա՛լ թափթփեցան հողիս մէջէն՝
Կոյր երազներու շամբուշ բաղձանքն ալ խոյս տուաւ
սիրտէս .

Մարմար կուրծքերու , թաւիշ այտերու տենչերն հը
րակէզ ,

Հողիս տենդոտ խորքերուն մէջէն հեռացան արդէն :

Սիրտըս ալ հիմակ բաղձանքներէ զուրկ կը մընայ լռին,
Հակայ պարապ մը սիրտիս ալքին մէջ իր հմայքն ունի .
Հողիէս ցայտող պատրանքներն ուժգին՝ հովեր ա-
շունք՝

Ահրտիս տենդոտած անունջնիքուն մէջ լոկ ցուրաեք
բերին :

Հողիս ա՛լ թափո՛ւր , ցրտոտա՛ծ համակ իր պատրանք-
ներէն ,

Հոն մթութիւն մը իր արհաւիրքոտ սարսուռը դըրաւ .
Ցաւերէն ցայտող վիշտի կոտտանք մը բիրտ ու անխրաւ
Այդ պատրանքէն վերջ տենդոտ հողիս հասած է ար-
դէն :

Լըռին ու թափուր, ցուրտ ու մթազին դարձած է հողիս,
Ահրէն մնացած սաքառուկոտ խոցեր մտած են դեռ նոր .
Ու երբ աչքերէս կաթող արցունքն ալ սահի խորն ամոր
Լոգի դիչերն . է հողիս , լացի դիչերն է կեանքիս :





Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր Ո Ւ Ն

Փաղփուռն ծաղիկ, աղջկան մը վարդ, այտերուն պէս
 ծաղիկ,
 Անգութ ձեռքեր քեզ քու բունէդ փրցուցին,
 Քնքուշ ծաղիկ հրազուն.
 Քու հմայքդ վայելելու ջերմ բաղձանքով՝ ցօղունէդ
 Դեռ քիչ առաջ հն զատեր:
 Սիրոս ալ քեզ պէս՝ այդ անողոք ձեռքերուն մէջ
 խաղալիկ
 Գիտի զատեն իր սէրերէն հըրածին,
 Զինքը պատող երազներէն ասմազուն.
 Բունէդ զատուած պիտի չորնաս, պիտի ցնդիս բոյ-
 րիդ հեռ,
 Ինչպէս եղած են շատեր,
 Իսկ ցօղունիդ վըրայ տենդոտ գորշ սպիներ՝ պիտի
 մնան.
 Երբոր սիրտէս սուրբ սէրերըս կը զատեն՝
 Սիրտիս մէջ ալ այն ատեն
 Խոցոտ վէրք մը պիտի մընայ յաւիտեան:
 Սիրտիս նման գլխերն ամբողջ կուլատ դուն,
 Երազելով դառնապէս,
 Առտուանց ալ թերթիկներդ արցունքով
 Համակ ցօղուած են արդէն:
 Ու կը սպասես արեւին պերճ ցոփքերուն՝
 Հացով թրջած սիրտիս պէս,
 Որ գան անոնք քու թրջուած կուրծքիդ քով,
 Ու քու արցունքդ սրբեն:
 Թաց այտերս ալ մինչեւ իրկուն կարծես պիտի սպասեն՝
 Ժպիտներու գլորանքին,

Որ տամկացած գորշութիւններն անհետին ,
Ու գիշերուան կարծես նորէն նոյն արցունքը երազեն :

Երբ արեւին ժպիտները շատ կը տեղան քու վըրադ ,
Կը գունատիս այն ատեն ,

Միրտիս նման , որ հեշտալից ժպիտներու բեռին տակ ,
Պիտի կքի անտաաճառ .

Այդ ցուքերը պիտի փոխեն վճիտ փայլըդ անարատ՝
Ինչպէս հուժկու գոռ նայուածքներ իմս փոխած են
արդէն ,

Ու երազներս ալ համակ՝
Գունաաած են չարաչար :

Ու օր մըն ալ ուժգին հովեր պիտի սարսն քու հագիդ
Թերթիկներդ կամաց կամաց պիտի թափին ալ գետին
Ինչպէս իզձերս , երազներըս ալ ամէն ,

Մինչեւ յոյսերն իմ յիտին ,
Կը թափթփեն իրենց ցուքերը վտիտ
Պատրանքներուն ցնցումէն . . .





Յ Ո Ւ Ր Տ Ե Ր Ո Ւ Ն Ն Ե Տ ...

Երկարատեւ շառայլներու հպանցումէն յղփացած,
Իրիկունը կը ձանձրանայ զինք շարժպատող թոյրերէն
Մինչև իրկուն երանգներու կարթումն առած մեղկօրէն՝
Հանգչիլ կ'ուզէ ստուերներու քօղքին ետեւ մթամած:

Ա՛լ ձանձրացած բոլորովին շառափներէն արծաթէ՞
Հորիզոնը ստուերներու գոռ երկունքը կը տանի,
Ու բոցավառ երկունքի մը հըրայրքէն վերջ կենդանի,
Կամաց կամաց իր երեսն ալ հսկայ մութ մը կը պատէ:

Ու գիշերը սարսուռներուն ընկերացած հովերու,
Տուրտ հպանցներ կը ցանցընէ խօլարար •
Հոգիները կը սարսըռան այդ պահերէն մեղմավար՝
Տուրտ ու ստուեր, ստուեր ու ցուրտ խառնուած են
իրարու :

...Սիրտս ալ զգուած զինքը գգուող ականրկներէ
լուսային,
Ձանձրոյթի մը հսկայ թափով կը ցնցուի գառնօրէն •
Պժգանքի մը խօլ երկունքներն ու տազնապներ ա-
նօրէն,
Ձանձրոյթներէն վերջ յափրացած սիրտիս խորը կը
սահին:

Ալ տաղտկացած իր ժպիտէն ու լուսափաղփ ականարկէն՝
Զողքի համար հոգիս մութին թոյլ ստուերները կ'ուզէ.
Շատ զգաց ան լոյս շաքիլներ ու նայուածքներ պլուզէ
Կը բաղձայ որ իր խորքին մէջ պուտիկ մը մութ
նեկարկեն:

Այդ բաղձանքով տազնապալիւր վերջալոյս մը կ'անցընէ,
Կամաց կամաց հոծ ստուերներ իր խորքին մէջ կը
յորգեն:

Իր ականարկին ու ժպիտին լոյս հըրայրքէն զերծ արդէն
Հսկայ մութ մը հոգիիս մէջ իր հմայքը կը դընէ:

Սիրտիս խորը ցրտութիւն մը կը յաջորդէ ամէնաւն,
Վայելք ու հուրք, սէր ու բաղձանք, ամէն բան ցոլրեւ
է դարձեր:

Իր աչքերէն ինկած կայծն ալ որ հուրքերըս կ'արծարծէր
Ալ երթալով թափթփեր է հըրապոյրներն իր անհուն:

Ամէն բանի հանդէպ ալ ցուրտ ու անտարբեր կը
դառնամ,

Շառայներէն չեմ ազգուիր՝ քանզի մութ է ներսիդիս,
Ժպիտներէն չեմ ազգուիր՝ քանզի ցուրտ է ներսիդիս,
Աւ ամէն բան կ'երեւի ինձ անփայլ, անշող, դառնահամ:

... Առաջ ամէն բանի հուրքէն կը կարծէի գիտովալ
—ի՛նչ գուրգուրոտ սիրտ մը ունիս կ'ըսէին ինձ նա-
խանձով:

Կը վախնամ որ հիմայ սառած կը կոչեն դիս ապահով
Սիրտդ՝ սառած, սառած՝ հոգիդ, սառած՝ սիրտիդ
գորո՞ղն ալ...:



Ձ Ի Ի Ն Ե Ր Ո Ւ Լ Ե Տ...

Ալ իր դէմքը մթագնելով հսկայ ցուրտ մը կը պատէ ;
Սիրտիս կառչող ակնարկներն ալ ինձ համար պտղ
կ'երեւին ,
Ժպիտները կարծես չունին իրենց ցւլքերն արծաթէ ,
Իր վարսերն ալ սիրտիս համար դողն առած են տերեւին :

Իրմէ ցայտող այս գոռ ցուրտը իմ վըրաս ալ կը թողու ;
Աչքերէս դուրս հոսող կայծը գողդղալէն կը մարի ,
Ալ երթալով սիրտս ու հոգիս ցուրտ մը կ'առնեն
մարմարի ,
Մթութիւն մը կ'առնէ կարծես վճիտ նայուածքս տղու :

Վառ այտերուս ջինջ փայլերը հետզհետէ կ'ամպտտին ,
Մթնշաղ մը ակնարկներուս զուլալ շողը կը գոցէ ,
Դնծի համար կը դադրին ալ երանգներ՝ ճոխ ու բոցէ
Ինծի համար կը նուաղին հմայքներ նուրբ ու հեշտին :

Այս ցուրտին մէջ, այս մութին մէջ սիրտըս երկունք
մը կ'առնէ,
Աբաղներէս փնջուած հեշտ բաղձանքները մեղմուլոր,
Այս ցուրտին մէջ, այդ պաղին մէջ կը ցնցուին ա՛լ
... րոլոր ...
Տակաւին կոյս ու դեռ վճիտ՝ վար թափթփիլ ի՛նչ
դառն է:

Ու ցուրտին տակ չդիմացած այդ իղձերս սրբազան,
Կը թափթփին, կը կաթկթին նուրբ պարոյրով մը ձիւնի,
Տակաւին կոյս ու ճեփճեփմակ, դեռ հաղիւ թէ պտ-
տանի՛
Ցուրտ ու մթին տագնապներով վերջալոյսի մը հասան:

Ախ, ո՛ւր էր թէ այդ կաթկթող ծուէնները ձիւնային,
Սիրտիս խորը գային հանդարտ ու հանդէ՛ին մեղմօրէն..
Բոյց պատրանքի ցնցող հովերն այդ իղձերը կը ցրուեն,
Խաբկանքի գոռ քամիները վայրէջքին մէջ կը սահին:

Ու վերջապէս երբ սիրտիս մէջ հասնին շիթերն այդ
ամէն
Այդ թափթփող բաղձանքներուն ցրտութիւնը դեռ
կ'աճի,
Ու կը սառին ցրտութենէն այդ իղձերս մեղմակի,
Կը քարանան, սպիներու դառըն հետքեր կը կազմեն:

...Ու կը սպասեմ որ հոգիիս նոր արեգակ մը ծաթի,
Նոր նոր թոյրեր իր այտերդն գեղնութիւնը պաշարեն,
Զղջումները՝ աչքերուն մէջ լաց-մարգարիտ ալ շարեն,
Ու ճակատն ալ վերստանայ իրեն շողքը արծաթի:

Այ այն ատեն տաքուկ շոգեր գտած իղձերս այդ տամուկ
Իրենց ոտուէն պիտի հալին, իրենց ցուրտն ալ կը
թօթուեն,
Ու աչքերուն ճաճանչին տակ որբուկ իղձերըս ամէն,
Նոր երանգներ պիտի առնեն, նոր թոյր, նոր վառք
ալ ճամուկ:

Ու գորովի, գուրգուրանքի ցայտումով մը գիւթեղէն
Պիտի պաշտեմ այդ արեւը, այդ արեւը կենսաբեր,
Մինչգեռ մէջս նոր երազներ պիտի ծլին ալ տարբեր,
Մինչգեռ ներսս նոր բաղձանքներ լոյս ճամբայ մը կը
պեղեն:

Սէրըս անոր պիտի ըլլայ որ թարմութեամբ պատեց
զիս,
Խանգըս՝ անոր, իղձըս՝ անոր, բոլոր յոյսերս ալ անոր.
Ու յաւէտ զայն պիտի պաշտենք գիւթանքներով նո-
րանոր՝
Սի՛րտըս ու ես, հոգիս ու ե՛ս, կեանքըս ու ես, ա-
մէնքնի՛ս....:

Սի՛րտըս ու ես, հոգի՛ս ու ես, կեանքըս ու ես, ա-
մէնքնի՛ս....:





ԽՕԼ ԲԱՂՁԱՆՔ

Թող ա՛լ ազատուիմ հովին ու մութին կաշկանգու մներէն՝
Խեղճ երազներըս իրենց գիրկին մէջ խաղալիկ ըրին ,
Լոյսի բաղձանքը էութեանըս մէջ մտնէ՛ թող նորէն՝
Հերի՛ք ըրած են անտարբեր հոգիս միշտ իրենց գերին :

Գիշերն հոգիս հմայք մը կու տար ու կը գըրաւէր՝
Իբր թէ անոր լոյսէ ցաւերը խըլեկու համար ,
Հովիկն ալ յաւէտ իմ բաղձանքներուս կուտար հըրաւէր՝
Իբր թէ մութով զովացնելու հոգիս տենդավառ :

Ու էութիւնըս իրենց յանձնեցի մեղկ ու անտարբեր ,
Հովիկն ու գիշեր իրենց ցայտքերը երթալով բերին ,
Ես ալ իրենց թոյլ զգուանքներուն մէջ եղած տար-
րուբեր ,
Գինովցած հոգիս իրենց քմայքին դարձուցի գերին :

Ալ պատրանաթափ իրենց թովքերէն սին ու անհամար ,
Արեւէն փրթած լոյսի շառափ մը ըլլալ կ'ուզէի ,
Վայրկեան մը գոնէ անոնց ձանձրոյթը վանելու համար՝
Դէպի շատ ետեւ ընէի արագ վա՛ղք մը բազէի :

Ուր որ հովերուն խօլ յորձանքները յաւէտ կը տիրեն՝
Երթամ գըրաւել իմ ցուքերովըս վայրկեան մը գոնէ,
Վրէժ մը լուծեմ, պահիկ մը գոնէ ցա՛ւ մը տամ իրեն,
Թող լոյսով շինուած նրբին սըլաքս ալ զինքը արիւնէ:

Ու ծաղիկներուն երթամ մօտենամ, սրբե՛մ վըրանուն՝
Գիշերին դըրած վճիտ ու տամուկ ցօղերն առտուան,
Այդ ցօղերուն անդ ցանցընեմ անոնց ճաճանչներ ան-
հուն,

Անո՛նց դարձընեմ ինչ որ գիշերէն խըլուած կ'երեւան:

Գիշերն ու լուսին երբոր իրիկուան կը սկսին ծագիլ,
Արգիլե՛մ զանոնք ցայտքերովս անհուն լոյս ու շառալի,
Խուժեմ մութին մէջ, խուժեմ գիշերին մէջ շաքիլ
շաքիլ,

Ու չթողում որ գիշերը տիրէ, լուսինն ալ փայլի...





ՑԱԻՇՐՍ

Կեանքը իր փուչէ ցցումներովը երեւաց սիրտիս ,
Հոգիս անգիտա՛կ՝ լոկ բիրտ սարսուռներ քաղեց այդ
կեանքէն ,
Մանուկ օրերըս վիշտին հետ շփուած վայրկեաններ
եղան :

Այդ գոռ ցաւերը իրենց խոցին տակ ընկճելով հոգիս ,
իրենց կոտտանքին հոգիս անտարբեր ըրա՛ծ են արդէն ,
Ալ փոյթ չեմ ըներ մթին սարսուռներ որչափ որ տեղան :

Ու կամաց կամաց ալ վարժուեցայ այդ կոտտանքներուն ,
Հոգիս համար լսկ սովորական վայելքներ դարձան ,
Թող պաշարեն զիս , թող խոցոտեն զիս որչափ որ կ'ուզեն :

Անտարբերութեամբ պիտի դիտեմ այդ թախճանք-
ներն անհուն ,
Տառապած հոգիս՝ մորմոքներուն մէջ պարուրուած
արձան՝

Հոգ չ'ըներ ցաւին , թող բիրտ մրմուռներ իր խորքը
յուզեն :

Ցաւերը եկան , պարուրեցին զինք , ու անցան գացին ,
Ուրիշ ցաւեր ալ եկան ու հասան անոնց ետեւէն ,
Ամէնքն ալ կարծես յօշոտող փայլը առած իրարու :

Այդ կոտտանքներէն հոգիս առած է տենդ մը հըրածին ,
Ու անոր համար հրճուամեք ու վայելք շատ ցիւ կը
տեսնն ,

Սէրերէն ալ քիչ , պահերէն ալ ցիւ՝ թոյլ ժպիտներու :

Ու մինչդեռ հոգիս իր երկունքներուն հուրքը կը
տանէր ,

Սիրտըս անտարբեր՝ անգիտակ պահեր անցուց ա-
ռանձին ,

Թախիճներէն զերծ՝ որոնք պատեցին , ընկճեցին հոգիս :

Դեռ չէր զգացած ոչ պահեր հեշտին ու ոչ ուլ սէրեր ,
Բայց հոգիս ցնցող վիշտերն ալ բընաւ զինք չպատեցին ,
Լոկ հոգիս մենիկ տազնապներ կրեց , զոկ ան ցնցեց
գիս :

Ու երբոր սէրը սիրտիս մէջ իր կսւռ հմայքը դըրաւ ,
Երբ վայելքներու վճիտ քաղձանքն ալ մտաւ սիրտիս
մէջ ,

Հոգիս պահիկ մը մոռցաւ իրեն հետ ծնած տառապանքն :

Հոգիէս թըռան գոնէ պահիկ մը խոցերն անիրաւ ,
Ու տամկութիւննին ցնցեցին՝ անոր թոյլ խորքերը գէջ ,
Ու թօթափեցի վիշտերով օժուն տազնապներս անյանդ :

Երբ հոգիս կուլար , սիրտըս ոչ արցունք , ոչ խոցը
գիտէր ,

Ու երբ պահիկ մը սիրտս գինք զարող սէրին տի-
րացաւ ,

Հոգիս իր կարգին անոր վայելքին եղաւ անգիտակ :

Սէրերը սիրտէս պաշտումի բոցով բուրվառեցին վեր,
Այդ նուիրումի պահերուն մոռցայ մորմոքներն ու
ցաւ,
Ու էութիւնով անձնատուր հլայ այդ սէրին համակ:

Սէրին հետ պատրանք, սէրին հետ ցնցում, սէրին
հետ մարմոք,
Ծագեցան սիրտիս անբիծ խորանին ալքերուն մէջէն,
Ու սէրերն ալ ինձ պատրանքի թափով երես դար-
ձուցին:

Կը կարծէի թէ ջինջ շաքիւններէն այդ սէրիս անհոգ,
Վայելքի պահեր, հեշտանքի ժամիր պիտի բողբոջնն,
Մինչդեռ ցաւերուս հետ ես մընացի նորէն առանձին:

Հոգիս որ պահ մը իր կոտտանքները մոռցեր էր ան-
դին,
Կրկին իր վիշտին, կրկին ցաւերուն եղաւ ենթակայ,
Մլող ցաւին հետ՝ քնացած ցաւն ալ կ'արթննայ եղեր:

Հիմայ թէ հոգիս, թէ սիրտս ցաւին հուրքը կը տանին,
Հոգիս վիշտն ունի, զոր կեանքը մեղմիկ դըրաւ իր
վըրայ,
Սիրտս ալ ցաւն ունի, զոր թողուց իրեն պատրանա-
թափ սէր...:



ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐՈՒ ՑԱՆԿԸ

Հաւատքի պահեր	5
Սէրերս	7
Ճիշտ սիրտիս նման...	9
Լռին հիւժճճւմ, ա՛խ, լռին...	10
Ջուրին աղջիկը	13
Խոստովանանք	15
Պարզ կեանքը	17
Արցունքներ	20
Կարօտէդ	22
Կը ծանծրանամ...	23
Փնչու հին	25
Հովին	28
ՄԹնշաղին կոյսը	30
Քիշերին	32

Շաարուտնին պէս	34
Անուշ խօսքեր	35
Լուսնակին	38
Բարկուծեան պաճեր	37
Անէացում	39
Յափրացում	41
Իրիկուան դէմ	43
Վերջալոյս	44
Խուփք	46
Լացի գիշեր	49
Ծագիկներուն	50
Յուրտերուն հետ...	52
Զիւներուն հետ...	54
Խօլ բաղձանք	57
Յաւերս	59

